ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Բազում համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Բազում	Ավագանու հերթական նիստ	17.11.2021	10:30	Բազումի համայնքապետարանի նիստերի դահլիճ (գ.Բազում, 1 փ. թիվ 2)

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2021 թ նոյեմբերի 17-ին՝ ժամը 10.30-ին Բազումի համայնքապետարանի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

ժամը՝ 10.30

1.Բազում համայնքի ավագանու թիվ 10 նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Համայնքի բնակչին դրամական օգնություն ցուցաբերելու մասին

3. Բազում համայնքի 2020 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

4. Սամվել Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում անասնաշենք կառուցելու նպատակով հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին

5. <<ՀՀ Լոռու մարզի Բազում համայնքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-Ի աշխատակիցների նոյեմբեր ամսվա աշխատավարձը վճարելու մասին

6. Բազում համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին

ՆԱԽԱԳԻԾ 55-Ա

ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Բազում համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 10 նիստի օրակարգը.

1. Թիվ 10 նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Համայնքի բնակչին դրամականօգնություն ցուցաբերելու մասին

3. Բազումհամայնքի 2021 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

4. Սամվել Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում անասնաշենք կառուցելու նպատակով հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին

5.<<ՀՀ Լոռու մարզի Բազում համայնքի մանկապարտեզ >> ՀՈԱԿ-ի աշխատակիների նոյեմբեր ամսվա աշխատավարձը վճարելու մասին

6.Բազում համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 56-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով , համայնքի ավագանու 2014 թ-ի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ Բազում համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին թիվ 31-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումը և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

1. Բավարարել համայնքի բնակիչ Նարինե Աղամալյանի դիմումը և համայնքի բյուջեից նրա ընտանիքին հատկացնել սոցիալական օգնություն:

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 57-Ա

ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Բազում համայնքի սեփականության 2021 թվականի գույքագրման փաստաթղթերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 58-Ա

ՍԱՄՎԵԼ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՆԱՍՆԱՇԵՆՔ
ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով ‘Տեղական ինքնակառավարման մասին’ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդկետով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, հաշվի առնելով Սամվել Քոչարյանի հայտը ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին, համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծային թույլատրությունը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝

Բազում համայնքի ավագանիրն որոշում է

1. Սամվել Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող 06-023-0604-0009 ծածկագրով 0.187142 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության այլ հողատեսքը, անասնաշենքի կառուցման և սպասարկման նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 59-Ա

<<ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ
ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանիր Հանրապետության <<Աշխատանքային օրենսգրքի>> 107-րդ հըոդվածի 1-ին մասով, 186-րդ հոդվածի 1-ին մասով,

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Կորոնավիրուսով պայմանավորված հարկադիր պարապուրդի մեջ գտնվող <<ՀՀ Լոռու մարզի Բազում համայնքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ -ի աշխատակիցների 2021 թվականի նոյեմբեր ամսվա աշխատավարձը վճարել երկու երրորդի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 60-Ա

ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ-Ի
ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Բազում համայնքի 2021թ-ի բյուջեում կատարված փոփոխությունները:

Եկամուտների գծով

Ընդամենը 62541,073

այդ թվում՝

վարչական բյուջեի մասով՝48715,2

ֆոնդային բյուջեի մասով՝13825,873

Ծախսերի գծով

Ընդամենը 92202,8

այդ թվում

վարչական բյուջեի մասով 48715,2

ֆոնդային բյուջեի մասով 43487,6

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ